



ՀԱՄԱԼԵՆԻՔԻ ՌՈՒՄՈՅ լրագիրը հրատարակուում է իւրաքանչիւր ամսի 10 ին և 20 ին. տարեկան գինը ճՈՒՎԱՐՆԻ հետ 'ի միասին է 5 ուր. արծաթ. իսկ կէս տարուանը 3 ուր. արծ. կանխիկ վճարելի:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20

Հ. 4

1861 ԱՄԻ

Պ. ԱՅՎԱԳՈՎԱԾԻՆՑ ՊԱՏԿԵՐԱՅ ՏԵՍԵՐԵՆԸ

Ազգիս երեւելի նկարիչը Պ. Յովհաննէս Կոստանդնուպոլսէան Այվազովսքի այս տարւոյ սկզբում ներկայացուց Փեթերպուրկի ժողովրդին իւր նոր նկարած պատկերները, և այդ տեսարանի նկարագրութիւնը դառնում ենք «Современникъ» ամսագրի Ապրիլ ամսեան հատորի «Замѣтки новаго поэта» վերնագրով յօդուածի մէջ, այսպէս.

«Շատապէս եմ նորից դառնալ շուտով դէպ 'ի... պ. Այվազովսքեայ պատկերաց տեսարանը:

«Պ. Այվազովսքեայ գործունէութիւնը զարմանալի է: Աս մին ձմեռան մէջ նկարեց Փեթերպուրկում տան և վեց պատկեր զանազան մեծութեամբ, որը որ և ներկայացուց այժմ նոյն մայրաքաղաքի հասարակութեան:

«Աս չկարողացայ չայցանել պատկերահանին իմ զարմանքը:

«— Չեմ հասկանում, զուք ի՞նչպէս էք կարողանում նկարել, ասացի ես նորան, — ձմեռ. ժամանակ Փեթերպուրկի մէջ այս կարճ և անոյցս օրերումս, որ աւելի արտմութիւն և սրանկութիւն են պատճառում:

«— Ի՞նչ կայ, պատասխանեց Այվազովսքին, — ես երբեք բնութիւնից չեմ նկարում, ես իմ նկարների նախագաղտփարները բոլոր առնում եմ երեւակայութիւնիցս: Չմեռն ինձ իսկ նկարելու ժամանակ է:

«Բաղդադուր է այն պատկերահանը, որի վերայ չունին ներգործութիւն ոչ կլիմայի և ոչ շրջապատող իրքն, և որ կարող է իւր կամքով զարթուցանել իւր մէջ ոգևորութիւն և ձևացնել կտաւի վերայ լուսաւոր և վսեմատեսն երեւակայութիւններ, հարաւային բնութեան քնքշութիւնը և գեղեցկութիւնը, արմաւենիքը և կանաչազարդ խոտերը, ծովերը և նաւերը արեգական ոսկեծաւանդ առաւօտեան միգի մէջ, երբ որ թուխալ և պղտոր երկնքից ձիւն է մաղում, կամ թէ տեղում է անձրև, երբ որ քարեայ որմունքը (պատերն) մին բանտի նման նեղումեն և որպէս թէ խեղդումեն մարդու, երբ որ սալայատակ հրապարակների և փողոցների վերայ երևում են փոսեր, լճակներ, ցեխ՝ սօճիների տերևներով ծածկուած, և երկու անդիտան թխազդեաց ձի, մին կառքի

լծուած, որի վերայ երերում է դադաղ... (Այս է Փեթերպուրկի առաւօտու պատկերը):

«Պ. Այվազովսքեայ տան և վեց պատկերաց մէջ առաւել հաւանելի եղան ինձ.

«Սեփապա... — նաւ՝ ոսկեծաւանդ առաւօտեան միգի մէջ (պատկեր ոչ այնքան մեծ):

«Փայլելի. — հարաւային եղերքում, և հօտ շէտաբայ, որը որ բուքը վարում է դէպ 'ի ծով (երկու մեծ պատկեր): Աւ մի այլ պատկեր ևս, որ յանդիման է կացուցանում մի մեծ բռնապետ հանապարհի, անձրևային և մրրկայեղ եղանակում:

«Այլ որ 'ի վերջոյ ասում է 'Աոր Պոէտը, ես բաւականապէս զուարճացայ այս բոլոր պատկերներին նայելով, պատկերահանը հրաւիրեց ինձ իւր առանձնատեսնակը (քապիտէտը), ուր և ձեռքը առնելով վրձինը և ներկայեց տախտակը՝ սկսաւ իմ առաջն նկարել մի փոքրիկ պատկեր — չգիտեմ ինչ տուն, որի ստուերը երևում էր ջրի մէջ: «Աս պատմեց ինձ քանի մի նոր պատկերների բովանդակութիւնները, որոց նա մտադիր է նկարել, և նոյա թուումս է նաւ ջրէջէջ պատկերը, որի վերայ վաղուց մատտանջ է լինում պատկերահանը: Շատ ցանկալի կլինի տեսանել այս սքանչելի և ահազին երևակայութեան տպաւորուիլը կտաւի վերայ...»:

Այսքան է 'Աոր Պոէտի գրածը: Աստուած կարողութիւն և յաջողութիւն տայ պ. Այվազովսքեային, կաւեղաններ և մենք, մեր ազգի պատիւը և փառքը առաւել յաջողապէս հանդիսացուցանելու համար:

ԱՊՏԻԼ ԱԶԻԶ

Անցեալ Յուլիս ամսի 3 ին Կոստանդնուպոլսում կատարուեցաւ Տաճկաց նոր Սուլթանի թուր կապելու հանդէսը: Ապտիւլ Աղլը Սուլթանը, մեռած փառիշահի եղբայրը, այդ օրը կապեց իւր մէջքին Օսմանի նուիրական թուրը, որին կրած են մինչև ցայժմ Օսմանի երեսուն և մին ժառանգները: Գեղեցիկ եղանակը շատ օգնեց հանդիսին: Երկնքի վերայ չկար և ոչ մի ամպ, և պայծառ արեգական ճառագայթները փայլում էին Վոսիփորի գեղեցիկ ափերի վերայ: Օգի սաստիկ տաքութիւնը մեղմանում էր արեւելեան զովարար հանդարտ քամով, որ փչում էր մարդասիրտ փողոցների վերայ: Պէյոզլուի, Վալաթիայի և Ստամբուլի, նոյնպէս և մօտակայ տեղերի բնակիչները՝ ուղղած էին առաւօտուանից իսկ իւրեանց գնացքը դէպ 'ի հանդիսի կատարման տեղը, դէպ 'ի Եյուպի խաղաղ արուարձանը: Անհամար զայիգները

(համարներ) և զանազան մեծութեամբ շողանալները՝ պատահելով Ոսկի Եղջիւր նաւահանգստի ջուրերը, բերում էին Վոսիորի և Մարմարեան ծովի բնակիչներին:

Դամբ 11 ին, թնդանութները իմաց տուին՝ թէ նոր Սուլթանը ելաւ Տօլմա - Պաղէէ անուանեալ պալատից: Քսան և վեց թիակով գայլ զը տարաւ հասուց Սուլթանին Էյուպի մզկիթը, ուր ընդ առաջ ելաւ նորան Մեծ Վեզիրը, Հէյա իւլ Խալամը, Իւլէմաները՝ ծնրագրութեամբ, և միւս բարձր աստիճանաւորները, որոց հետ միասին մտաւ Ապախլ Աղիզը մզկիթ, ուր կատարեցաւ բարեմաղթութեան պաշտօն: Այս տեղից բոլորեցեան զնացին շիրիմ (թիւրպէ) և ժամը 12 և 3/4 լոպէին կէս օրից յետ (այս ժամանակը նշանակած էին կայսերական աստղաբաշխները), Սուլթանը մտաւ այն սենեակը, ուր դառնում են զիւցազուները և մարգարէի դրօշապահների ոսկերքը: Այս տեղ Նայիպի-Էջլէֆ Հիւնքեարի անունով քոնեայի մօլլան, որի գերդաստանը մեծ պատիւ ունի, կատարեց այդ հանդիսի ամենամեծ արարողութիւնը՝ կապելով Օսմանի թուրը Սուլթանի մէջքին:

Այդ միջոցին կայսերական ուղեկիցները կանգնեցան շիրմի առաջև, և երբ որ Սուլթանը դուրս ելաւ նորա միջից, փառաւոր հանդէսը ընդ առաջ գնաց: Տեսարանը հոյակապ էր երբ որ հանդէսը ուղղեցաւ դէպ Էտիրնէ գալուստ:

Այդ հանդիսի առաջինը գնում էին ձիու վերայ նստած՝ Սէյիմ փաշան, և հիծելալոյսների մի գունդ: Նոցա ետևից տանում էին ութ շքեղազարդ ձիեր. յետոյ կարգ կարգ գնում էին զինուորական բարձրաստիճան պաշտօնականներ, զօրքի ընդհանուր հրամանատարներ, դրամական խորհրդարանի անդամներ, բարձրաստիճան իշխաններ, և զօրադիւսապետներ, որոց միջում և Մուհաբէր փաշան (ժամանակով Ասլաուէ ծովապետը), Պաթի շքանշանով զարդարուած: Գնում էին նոյնպէս կարգաւ Իւլէմաներ, մարաջախտներ, մուաժ Սուլթանի փեսաները, նախարարներ, ժամանակով եղած Մեծ Վեզիրներ, Հէյա իւլ Խալամը, և Մեծ Վեզիրը: Սոցանից յետ գնում էին վեց զարդաւոր ձիեր, տապարակիրներ, կարմիր հանգերձներով, փայլուն տապարներով, և վերջապէս սոցա ետևից ինքը Սուլթանը, գեղեցիկ Արաբական նժուգի վերայ նստած: Նոր քրդար - աղասըն և այլ պալատական սպասաւորներ և պաշտօնակիցներ գնում էին նորա ետևից: Այսպիսի կարգաւ անցան նոցա փողոցների միջով: Կէս միլիոն ժողովուրդ, Եւրոպայի և Ասիայի, այլ և այլ ազգերից, Հայ, Յոյն, Թուրք, Չեքքէզ, Քուրա, Արաբ, Պարսիկ, Հրէայ, Հնդկ, Ալբան Բրօա, Ֆրանկ, և այլն, և չնայելով այդքան բազմութեանը, ոչ ոք չխանդարեց հանդիսի փառահեղութիւնը: Ժողովուրդը խորին բուլթեամբ ողջունում էր նոր թագաւորին. միայն այս և այն կողմում երևում էին քանի մի անձինք, որ ձողերի ծայրերից կապած իւրեանց խնդիրքը բարձրացնում էին:

Ոչ շատ հեռի Էտիրնէ - գալուստից պատրաստուած կար մի շքեղազարդ վրան Գեւորանների և նոցա գերդաստանների համար: Վերջապէս հանգիստաւոր ընթացքը հասաւ քաղաք և ուղղեցաւ դէպ երկրորդ Մեհմեմետի (Գեթիհ) գերեզմանը: այս տեղ Սուլթանը ձիուց իջաւ և աղօթեց: յետոյ երկրորդ Մահմեմետի գերեզմանի մօտ նոյնպէս իջաւ, և աղօթեց: Եւ յետ այսորիկ ոչ մի տեղ դադար չառնելով՝ հասան նոցա հին պալատը, և Սուլթանը մտաւ պալատ խալիչաների և շալերի վերայ գնալով, որ փռուած էին ճանապարհի վերայ. պալատի դռանը՝ ընդ առաջ ելաւ նորան՝ նորա մայրը, և տարաւ նորան պալատ, ուր և ինքը Սուլթանը ընդունեց կանանց երգումը:

Այսպէս վերջացաւ Սուլթանի թրակապութեան հանդէսը Յուլիսի 3 ին:

ՀԱՄԱԲԱՆՆԵՐ

1861. Սեպտեմբեր 11.

ՊԱԼԱՏԱԿԱՆ

Օգոստոսի 11-ին կայսրն և կայսերուհին յաջողութեամբ հասան Օտէսա Օգոստոսի 19 ին, երեկոյեան ժամը 7 ին: Կիւրակէ օրը ներկայ դասնուեցան Ս. պատարագի աղնուատոհմ օրիորդաց ուսումնարանի մատրան մէջ, և գնացին յաւազ եկեղեցին: Թագաւոր կայսրը ակնարկութիւն արաւ Վ. օլմիսքի հետեակ զօրաց գնդին, և 14 երորդ Սարէքքօլլը գնդին, իսկ երեկոյն Նորին Մեծութիւնը գնաց Պէտեր, ուր՝ հասանելուց յետ, ամսի 21 ին առաւօտուն՝ բարեհաճեցաւ ակնարկութիւն առնել հետեակ զօրքի 15 երորդ բաժնին, և նորա թնդանութներին և զինակրութեանը: Բոլոր զօրքերը գտանուեցան շքեղ վիճակի մէջ: Թագաւոր կայսրը վերադարձաւ Օտէսա ժամը 8 ին առաւօտուն:

— Օգոստոսի 11-ին կայսրուհին ամսի 21 ին, բարեհաճեցաւ այցելութիւն առնել Օտէսայու Միխայիլովսքի վանքին, ողորմութեան քոյրերի հասարակութեան, որոց կըրթարանին, Աղեքսանդրեան ապաստանարանին մանկանց, և ուսումնարանին աղնուատոհմ օրիորդաց:

— Ամսի 22 ին կէս օրին Նոյնին Մեծութիւնը պիտի ճաշագարհ երանէին «Թիկր» անուն ֆրէկաթով Խրիմ գնալու:

— Սեպտեմբերի 3 ին երեկոյեան ժամը 9 ին, Նորին կայսերական Բարձրութիւնն թագաւոր Ժառանգը կայսերան և Մեծ Իշխանն Ներկայ Աղեքսանդրովսք, բարեհաճեցաւ ուղեորիկ Մոսքուայից Փեթերպուրկ:

— Նորին կայսերական Բարձրութիւնն թագաւոր Ժառանգը Մակարիայի տօնաւաճառում եղած ժամանակին, այն է՝ Օգոստոսի 11 ին, բարեհաճեցաւ այցելութիւն առնել և Հայոց պանդոկներին, ուր յետ վերահասու լինելոյ նոցա առանձին շնութեան, սկսաւ հարցաւորած առնել ազգային կերակուրների և զինիների մասին, և բախի միջից անցանելով մտաւ խահանոցը (ԿՄՄԱ), նստեցաւ կրականոցի (մանդալի) առաջև և հրամայեց պատրաստել իւրեան շէշքը: Այս տեղից երանելէն յետոյ Նորին Բարձրութիւնը գնաց և այլ տեղեր զննելու:

— Սեպտեմբերի 9 ին, երեկոյեան ժամը 11 1/2 ին, Նորին կայսերական Մեծութիւնը ելաւ Լիւստիակէն: Ֆէոդոսիա հասանելուց յետ, ամսի 10 ին՝ յայց ելաւ Խալիպեան Ուսումնարանին, Օլիմուրաց հիւանդանոցին և Թանգարանին: Ֆէոդոսիայէն ուղեորեցաւ Նորին Մեծութիւնը Վերջ և Թաման:

ՏԵՐՈՒԹԵԱՆ

Յուլիսի 4 ին Բարձրագոյն հաստատուեցան «Մոսքուայի Գրական Հասարակութեան կանոնները» (Уставъ Московскаго Гражданскаго Общества), որ և տպուած են արդէն Սենադի լրագրում Օգոստոսի 22 ից: Այս հասարակութեան հաստատիւներն են, Պ. Պ. Կոնզակո - Փալիլէնսքի, Ֆալքէնհայկէն - Չալէսքի, Յ. Ս. Յովնանեան, Ֆ. Մ. Վոկաու, Ա. Ի. Բոշէլով, Վ. Ա. Փրիպլըքի, Բ. Թ. Սոլտաթենքով, Ա. Ի. Խլուտով, և Կ. Ֆ. Յէնքեր:

ուրթիւնը կրկնուեցաւ մի քանի անգամ, և յաջողեցաւ ամենայն կողմից: Ժողովուրդը, որ հաւաքուած էր տեսանելու այդ նոր շոգեկառքը, ողջունեց բարձրաձայն «—»:

— «Самарскія Гудерускія Водомосты» անուանեալ լրագրի մէջ գրուած են՝ թէ Ս. Բրուքով գիւղի ամառանոցներում, Յունիսի 22 ին, եկած է այնպիսի կարկուտ, որի իւրաքանչիւր հատը կշռուած է եղած կէս ֆունթ: Սորանից եղած վնասը հասանում է 16,000 ռ. արծ:

— Հոկտեմբերի սկզբում քաղաքիս մէջ պիտի բացուի պողոտ և բանջարոց հանդիսարան:

ԵՐՏԱՔԻՆ

Եւթմեան ժամանակը (Օգոստոս ամիս) թագաւորաց ճանապարհորդութեան իսկ ժամանակն է: Դանապարհորդներից մի քանիսը արդէն ճանապարհում են, և ոմանք դեռ նոր պատրաստուում են գնալու: Այսպէս Բրուսաց թագաւորն անողջանալով՝ Պատենում ստացած գնդակի հարուածից՝ գնաց Օսթէնտէ, ուր տեսնուեցաւ Պէլճիքայի թագաւոր՝ Լէօիօլիի հետ: Պատեն — Պատենում այցելութիւն արաւ նորան Սաքսոնիայի Գոլհաննէս թագաւորը: Օսթէնտէից վերադառնալու ժամանակ Բրուսիայի թագաւորը Գաղղիայի արևելեան սահմանում պիտի տեսնուի Նափոլէոնի կայսեր հետ, որ վաղուց ցանկանում է տեսնել նորան: Շվեյցիայի թագաւոր Կարոլոս Ժե երրորդը՝ Նափոլէոնի հետ բարեկամական տեսութիւնից, Գաղղիայի զօրքերը տեսնելուց, և բազում գովասանութիւններ առնելուց յետ այդ զօրքերին (ինչպէս վկայում են Գաղղիական բոլոր լրագրները), վերադարձաւ իւր հայրենիքը: Աւստրիայի Էրցհերցոգ Վալդիսլիսը՝ որ կայսեր եղբայրն է և ընդհանուր ծովապետ Աւստրիական նաւատորմի, այցելութիւն արաւ Անգղիային, և այն տեղ՝ ցամաք ելանելու ժամանակ՝ Սոմերսեթսիրում, մին ճառ կարդաց, որի մէջ հաւատացնում էր Անգղիացիներին՝ թէ Աւստրիայի այժմ նոյնպէս հասարակապետական (constitutionel) երկիր է, և թէ այս պատճառով Անգղիային՝ որպէս առաւելագոյն հասարակապետական երկիր աշխարհիս երեսին՝ պարտական է այժմ Աւստրիայի հետ անկեղծ բարեկամութիւն ունենալ և ամենահաստատ կապակցութիւն: Ասողներին միջում էր և Ռուսիք, որ յայտնի է Աւստրիային կողմնակից լինելով: Նա համաձայնեցաւ Էրցհերցոգի հետ՝ թէ արդարեւ չկայ պատճառ՝ որ հեռացնեն Անգղիան Աւստրիայից: Բայց երևում է որ Ռուսիքի կարծիքի վերայ Անգղիական օրագիրները չեն խօսում գովաբանութեամբ, այնպէս որ նորա կարծիքը՝ համարեա թէ մնաց միայն նորա համար: Ասում է թէ Նափոլէոնի կայսրը շուտով ճանապարհորդութիւն է անելու դէպ ի Գաղղիայի հարաւայեան կողմերը, ուր Փրիւսէն յում տեսութիւն է առնելու Սպանիոյ Իզապէլլա թագուհու հետ: Անգղիացեաց թագուհին ևս ճանապարհորդում է այժմ Իսլանտիայի մէջ:

— Հոռմի մէջ լինում են այժմ զուարճալի անցքեր: Կարտինալ Մէրտը պահպանեց Հռոմայեցեաց զինուորին որ վերադարձել էր Գաղղիացի մին զինուոր, և հրաժարուեցաւ տալ նորան Գաղղիացոց զօրքի հրամանատարի՝ Կոյոնի ձեռք, չնայելով Պապի և Կարտինալ Անթոնիէլիի հրամանին: Մէրտը ինքը անձամբ գնաց Կոյոնի մօտ, սպառնալից և անվայել խօսքեր ասաց Ղուտովիկոս Նափոլէոնի վերայ: Կոյոնը հրամայեց նորան լուել, և ասաց՝ թէ որովհետև նորա հոգևոր կոչումը թոյլ չէ տալիս իւրեան՝ մի ապտակ տալ նորա երեսին, կատարում է այս բերանացի (словесно):

— Օտքար Պէքքէր ուսանողին դատապարտեցին 20 ամեայ ծառայութեան՝ Ռեզու թեան Տան մէջ (въ смирительномъ домѣ), և ապա արքայանայ:

— Սկսեցին 7 ին, երեկոյեան ժամը 9 ին, Աթէնի մէջ, Տա-

սիաս անուն 17 տարեկան ուսանող ատրճանակ (революберъ) արձակեց Յունաց Թագուհու վերայ երբ որ վերադառնում էր Նորին Մեծութիւնը ման գալուց: Գաւաճանն իսկոյն բռնուեցաւ և յայտնեց՝ թէ ինքն միայն է, և չունի իւր գաւակից:

— 1862 թուականի Համաշխարհական տեսարանի պալատի շինութիւնը շատ յառաջ է գնում, մինչև անգամ գմբէթները ևս, որ երկաթից պիտի լինին, և որ շինում է Thames-Iron ընկերութիւնը, շուտով պատրաստ կլինին: Իւրաքանչիւր գմբէթի համար պիտի գործածուի 600 թոն (իւրաքանչիւր թոնը է 60 փուտ) երկաթ: Այդպիսի մեծութեամբ գմբէթներ երբեք չեն եղած: Նորա տասներկու անկիւնի են, ունին 250 ֆութ բարձրութիւն և 160 ֆ. տրամագիծ: Մանաւանդ հրաշալի պիտի լինին դահլիճները (заль), որոց մէջ պիտի ծախուին նախաճաշի համար ուտելիք և հովացուցիչ բմակներ: Այդ դահլիճների իւրաքանչիւրը պիտի ունենայ 300 ֆութ երկայնութիւն և 75 լայնութիւն:

— Գաղղիոյ Գիտութեանց ճեմարանը նշանակեց վարձ Պ. Թիեռի ներկայ ժամանակիս երեկի պատմաբանին՝ 20,000 ֆրանք, նորա աշխատութեան համար, որ ունի վերնագիր Հիպոթեթիս և Կոյոնի պատմութիւն: Բայց նա ինքն Պ. Թիեռ յայտնելով իւր շնորհակալութիւնը այդ վարձատրութեան մասին, խնդրեց ճեմարանի նախագահ անդամին, նուիրել նշանակած գումարը այլ գրականական աշխատութիւնների, ճեմարանի որոշելով:

— Մինկախուրից գրում են՝ թէ այն տեղ եղել է սաստիկ երկրաշարժութիւն, և թէ նորանից վնասուել են մինչև ութ հարիւր մարդ:

— Պ. Պէքք, որ Փառլամենտի անդամ է, և որ ի լոյս ընծայեց «Encyclopedia Britannica» վերնագրով գիրքը, յայտնեց իւր ընկերներին տուած ճաշկերութի ժամանակ՝ այդ բազմահատոր աշխատութեան համար եղած ծախուց հաշիւը, թէ Հեղինակներին՝ նոցա շարադրութեանց համար՝ վճարել է 250,000 ուրբի արծաթ: Թղթի համար՝ 325,000 ուրբ. արծ. տպագրութեան համար՝ 225,000 ուրբ. արծ. պատկերների համար՝ 112,500 ուրբ. արծ. կաղմի համար՝ 137,500 ուրբ. արծ. և յայտարարութեանց համար՝ 68,000 ուրբ. արծ. Ամեն մինչև 1,150,000 ուրբ. արծաթ:

— Անգղիայի մէջ ապրում են ողորմութեամբ մինչև չորս միլիոն աղքատ, որ բոլոր բնակիչների եօթներորդ մասն են, համարելով Իսլանտիայի մէջ՝ 2,300,000. Անգղիայի մէջ՝ 1,500,000. Շվեյցարիայի մէջ՝ 200,000. Վերջին երեսուն տարւոյ ընթացքում բաժանած են նոցա 200 միլիոն ֆունթ սթերլինկ:

— Թիպէթում գտած են մի նոր տեսակ ձի, որ ունի ճակատի վերայ եղջիւր:

ԵՐՈՒՆՍԵԿԱՆ

Գաղղիոյ Քիւսէ քաղաքում, Մէյերի և Անգի թղթի գործարանի մէջ, շինում են ծովային խոտից թուղթ, մին նոր գտած հնարքով:

— Եւթմեան, ասում է «Courrier» լրագիրը, Հալլը քաղաքում, Պ. Լէփէլլէգիլէի տպարանի մէջ, փորձ փորձեցին մին նորաձև նորաշէն տպագրական մամուլ վերայ, որ շինած է Ամերիկացի ճարտարապետը Պ. Ջոն Ա. Վիլքենսոն: Այդ նոր մամուլը կարող է տպագրել մին ժամու մէջ 20,000 մեծագիր թերթ: Բաց յայտնանէ, ունի նա մին այլ գործի, որ համարում է, կտրում է և վերջապէս ծալում է տպագրուած թերթերը: Եղած փորձերը թէև առ այժմ բաւականացուցիչ չեն կարող համարուիլ, բայց այսու ամենայնիւ յոյս կայ՝ թէ այդ գիւտը մեծ օգուտ բերէ, մանաւանդ օրագրաց, որոց համար ժամանակը յոյժ թանկ է:

ԽՄԲԱԳՐԻԶՔ Մ. և Զ. ՄՍԵՐԵԱՆՑ